

ՎԱՐՍԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019Թ-Ի  
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի համայնքի անդամներ, ավագանի:

Ձեզ է ներկայացվում Վարսեր համայնքի ղեկավարի 2019թ-ի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Անցած ժամանակահատվածում հրավիրվել է համայնքի ավագանու 9 նիստ, կայացվել է 53 որոշումներ:

Ավագանու կողմից կայացված որոշումները կատարվել են:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 116 որոշում և 33 կարգադրություններ:

Հրավիրվել է համայնքի ժողովներ, որտեղ քննարկվել են համայնքին հուզող հարցերը:

Այժմ ըստ բնագավառների իրականացված աշխատանքների մասին.

Վարսեր համայնքի 2019թ. տարեկան բյուջեի կատարման հաշվետվությունը:

2019 թվականին բյուջեի գումարները ծախսվել են նպատակային: Ինչպես աշխատավարձի, այնպես էլ պայմանագրային պարտավորությունների ուղղությամբ պարտքեր չունենք:

2019թ. համայնքի վարչական բյուջեի եկամուտների գծով պլանավորված 52248.0 հազ. դրամի դիմաց հավաքագրվել է 54686,0 հազ. դրամ, որը կազմում է 104.7%, որից սեփական եկամուտների գծով պլանավորված 18034,0 հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 20472,1 հազ. դրամ, որը կազմում է 113.5%:

**Համայնքի բյուջեի եկամուտները**

Եկամտատեսակները	պլանային	փաստացի	կատարողական
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ</b>	52 248 500,00	54 686 570,00	104,7
1.Հարկեր և տուրքեր , որից	11 070 000,00	10 895 813,40	98,4
1.1. Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	120 000,00	113 776,00	94,8
1.2.Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	5 700 000,00	4 186 417,40	73,4
1.3. Գույքահարկ փոխադրամիջոցների համար	4 500 000,00	5 850 120,00	130,0
1.4. Տեղական տուրքեր	750 000,00	745 500,00	99,4
2. Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	34 214 500,00	34 214 500,00	100,0
3. Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	760 000,00	1 423 216,00	187,2
4.Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար	0,00	26 000,00	0
5. Ադրահանություն	1 000 000,00	805 804,00	80,6
6. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	679 000,00	690 200,00	101,6
7. Մուտքեր տույժերից, տուգանքներից	0,00	700 000,00	0
8. Այլ եկամուտներ	4 525 000,00	5 931 036,60	131,0

**Ծանոթություն:** 2019 թ սուբվենցիոն ծրագրի շրջանակներում պետական բյուջեից համայնքի մանկապարտեզի կապիտալ հիմնանորոգման աշխատանքների կատարման համար տրվել է 37 300,0 հազ դրամ:

2019թ համայնքի տարածքում օտարվել է գույք (աճուրդով հողի վաճառք), որը կազմել է 17 349,0 հազ դրամ:

2019թ. վարչական բյուջեի ծախսերի գծով պլանավորված է եղել 52248,0 հազ. դրամ, ծախսվել է 44 736,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 85,6%:

**Վարչական բյուջեի ծախսեր**

անվանումները	պլանային	փաստացի	կատարողական
-Աշխատողների աշխատավարձեր և հավելվածարներ	15 926 000,00	15 794 354,70	99,1
- Պարգևատրումներ	400 000,00	350 000,00	87,5
-Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	80 000,00	43 500,00	54,3
-Էներգետիկ ծառայություններ	2 000 000,00	1 761 202,70	88
-Կոմունալ ծառայություններ	1 020 000,00	1 005 225,40	98,5
-Կապի ծառայություններ	200 000,00	197 396,80	98,7
-Ապահովագրական ծախսեր	50 000,00	39 000,00	78
-Ներքին գործուղումներ	200 000,00	0,00	0
-Համակարգչային ծառայություններ	110 000,00	100 800,00	91,6
-Տեղակատվական ծառայություններ	300 000,00	277 350,50	92,4
-Ներկայացուցչական ծախսեր	200 000,00	0,00	0
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	5 244 000,00	4 910 000,00	93,6
-Մասնագիտական ծառայություններ	1 700 000,00	1 354 394,00	79,7
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	2 000 000,00	1 346 838,00	67,3
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	800 000,00	528 600,00	66,1
-Գրասենյակային նյութեր և հագուստ	300 000,00	232 590,00	77,5
-Տրանսպորտային նյութեր	4 500 000,00	3 808 101,80	84,6
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	200 000,00	200 000,00	100
-Հատուկ նպատակային այլ նյութեր	1 000 000,00	766 900,00	76,7
-Հուղարկավորության նպաստներ բյուջեից	1 000 000,00	750 000,00	75,0
-Այլ նպաստներ բյուջեից	1 100 000,00	990 000,00	90,0
-Պարտադիր վճարներ	400 000,00	337 950,00	84,5
-Բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում	300 000,00	0,00	0
Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	13 218 500,00	9 942 500,00	78,4

Ընդամենը	52 248 500,00	44 736 703,90	85.62
----------	---------------	---------------	-------

### Ճոնդային բյուջեի ծախսեր

անվանումները	պլանային	փաստացի	կատարողական
- Շենքերի և շինությունների կառուցում	67 939 274,00	65 889 564,00	96,9
- Վարչական սարքավորումներ	75 000,00	75 000,00	100
- Չեղարկված քարտեզագրական ծախսեր	400 000,00	400 000,00	100
- Նյութեր և պարագաներ	3 925 000,00	3 712 500,00	94,6
Ընդամենը	72 339 274,00	70 077 064,00	96,9

**Ծանոթություն:** 2019 թ համայնքում իրականացվել է մանկապարտեզի կապիտալ հիմնանորոգում, որի մի մասը ֆինանսավորվել է Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման (սուբվենցիաներ), իսկ մյուս մասը համայնքի բյուջեի միջոցների հաշվին: Եղանակային պայմանների պատճառով հիմնանորոգման աշխատանքները հետաձգվել են մինչև 2020թ օգոստոս ամիսը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 83940,0 հազ. դրամ, համայնքի բյուջեից տրվել է 29379,0 հազ դրամ, իսկ պետական բյուջեից տրվել է 37300,0 հազ դրամ, մնացած մասի ֆինանսավորումը նախատեսվում է այս տարի:

### 2. ԶԱՂԱԶԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԿԸ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կոմունալ տնտեսության բնագավառում կարելի է առանձնացնել 2 հիմնական խնդիրներ.

1. խմելու ջուր
2. սանիտարական մաքրություն և աղբահանություն

2019թ համայնքի տարածքում Տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով կատարվել է խմելու ջրի ներքին և արտաքին ցանցի կառուցում:

Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կատարելու համար ծախսվել է 960,0 հազար դրամ:

### 3. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Տեղական բյուջեի միջոցները մասնակիորեն են բավարարում ներհամայնքային ճանապարհները վերանորոգելու համար: Հիմնականում կատարվել են փոսայցումներ և հարթեցման աշխատանքներ, որի գումարը կազմել է 990,0 հազ. դրամ:

Համայնքում գործող առևտրի կետերին ժամանակին տրվել է համապատասխան թույլտվություններ և գանձվել է տեղական տուրքեր:

### 4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքի միջնակարգ դպրոցը գործում է իր բնականոն հունով: Դպրոցը համալրված է մանկավարժական համապատասխան կադրերով:

Կատարվել է մանկապարտեզի կապիտալ հիմնանորոգման աշխատանքների մի մասը, մյուս մասը նախատեսվում է կատարել 2020թ: Ավարտելուց հետո պլանավորվում է ձեռք բերել անհրաժեշտ գույք և վերագործարկել այն:

Վարսերի մշակույթի տան և գրադարանի աշխատանքը տարեց-տարի բարելավվում է: Զանի որ առայժ չկա ջեռուցման հնարավորություն, պարի և թաեքվանդոյի խմբակները գործում են սեզոնային՝ 7 ամիս:

5. ԱՌՈՂՋԱՂԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի ամբուլատորիա, 2 ընտանեկան բուժքույր է սպասարկում գյուղը, որը բավարար է: Սոցիալական ծառայության <<Փարոս>> համակարգից օգտվում են 31 ընտանիք: Անապահովության գնահատման մեխանիզմից կախված դեռևս համայնքում կան ընտանիքներ, որոնք սոցիալապես անապահով են, բայց չեն օգտվում այդ համակարգից:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքապետարանը տեղական բյուջեի հաշվին որոշակի ֆինանսական աջակցություն է ցուցաբերել նման ընտանիքներին: Գյուղում ցավոտ խնդիր է մնում գործազրկությունը:

6. ԳՅՈՒՂԱՏՆՆԵՍՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ամեն տարի համայնքապետարանը 2019թ-ին օգնեց գյուղացիներին ագրոտական պարարտանյութ ձեռք բերելու հարցում:

Անասնաբուժական ծառայության ուղրտում պետ պատվերի շրջանակում իրականացվում է բոլոր հակահամաճարակային միջոցառումները:

ՎԱՐՍԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ.Անդրակյան

